

**ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԸ**

1. Յուրաքանչյուր գետավազանի ջրային հաշվեկշիռը ցույց է տալիս գետավազան ջրի մուտքի և ելքի հարաբերակցությունը և դրանցով պայմանավորված ջրի պաշարի փոփոխությունը:
2. Գետավազանի ջրային հաշվեկշռի մուտքի հիմնական տարրերն են մթնոլորտային տեղումները, այլ ավազանից ներհոսքը և ստորերկրյա հոսքը, իսկ ելքի տարրերը՝ գոլորշիացումը և արտահոսքն ավազանից:
3. Զրային հաշվեկշռի բոլոր տարրերը որոշվում են չափման կամ գնահատման որոշակի անճշտություններով, հետևաբար ջրային հաշվեկշռի հավասարումը պետք է ներառի նաև անկապքի գործակից (μ):
4. Յուրաքանչյուր գետավազանի համար յուրաքանչյուր ժամանակահատվածում ջրային հաշվեկշռի հավասարումը ունի հետևյալ տեսքը՝

$$P + Q_{\text{տհ}} - E - Q_{\text{մա}} - Q_{\text{սա}} - \Delta S - \mu = 0$$

որտեղ.

P – ջրհավաք ավազանում տեղացող մթնոլորտային տեղումներն են,

$Q_{\text{տհ}}$ – գետավազանում ստորերկրյա ջրերի հոսքն է,

E – գոլորշացումն է ավազանի մակերևույթից,

$Q_{\text{մա}}$ և $Q_{\text{սա}}$ – գետավազանից մակերևութային և ստորերկրյա ջրերի արտահոսքն է,

ΔS – ջրի ծավալի փոփոխությունն է (որը կախված մուտքի և ելքի բաղադրիչների հարաբերակցությունից կարող է լինել դրական և բացասական),

μ – անկապքի գործակիցն է:

5. Զրային հաշվեկշռի հաշվարկման համար պետք է 30 և ավելի տարիների տեղումների դիտարկման տվյալների շարքեր, իսկ եթե տվյալ գետավազանում տվյալները բավարար չեն կամ բացակայում են, անհրաժեշտ է դրանք վերականգնել կամ երկարացնել կոռեկցիայի մեթոդով՝ օգտագործելով համարժեք օդերևութաբանական կայանների դիտարկման տվյալները:

6. Գետային հոսքը հաշվարկվում է բազմամյա մշտադիտարկումների տվյալների հիման վրա, ինչպես նաև հաշվի է առնվում գետավազանի ֆիզիկաշխարհագրական առանձնահատկություններն, որն ազդում է հոսքի ձևավորման վրա:
7. Գոլորշիացումը մակերևութային ջրային ռեսուրսներից հաշվարկվում է ըստ գոլորշաչափի տվյալների, իսկ դրանց բացակայության դեպքում օգտագործվում են ջրային և ջերմային հաշվեկշռի, աերոդինամիկ կամ էմպիրիկ մեթոդները:
8. Զրային հաշվեկշռի տարրերի հաշվարկման միավորն է **մմ** կամ **մ³**: